ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱՂԻՈՐԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 24-ին տեղի ունեցավ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հերթական նիստը, որին մասնակցում էին Խորհրդի նախագահ Արա Շիրինյանը, անդամներ՝ Նարա Շլեպչյանը, Մերուժան Տեր-Գուլանյանը, Ստեփան Զաքարյանը, Լևոն Գալստյանը:

Օրակարգային հարցերի քննարկումից հետո ընդունվեցին հետևյալ որոշումները:

1. Խորհրդի անդամները լսեցին Հանրային ռադիոյի գործադիր տնօրեն Գարեգին Խումարյանի զեկույցը՝ վերջին ամսում կատարած աշխատանքների և նոր ծրագրերի մասին:
   Համաձայն զեկույցի, սկսվել է երեք ռադիոստուդիա տեսապատկերով ուղեկցելու (վիզուալիզացիա) ծրագրի աշխատանքը: Ի գիտություն ընդունվեց 1314 մՀց հաճախությամբ Նորատուսի ռադիոհաղորդակի աննպատակ օգտագործման դադարեցումը, ինչը կապահովի տարեկան 48,9 մլն դրամի խնայողություն:

2. Խորհրդի անդամները ծանոթացան հոգևոր-մշակութային Հանրային հեռուստաընկերության 2020թ. հաղորդացանցի և նախապատրաստվող ծրագրերի տպագիր ցուցադրությանը:

3. Խորհուրդը լսեց Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրեն Մարգարիտա Գրիգորյանի զեկույցը՝ նոր եթերաշրջանի համար նախապատրաստվող հաղորդումների մասին: Ներկայացվեցին ընթացիկ և շարունակվող հաղորդաշարերի բարելավման հնարավոր միջոցները:
   Գործադիր տնօրենը ներկայացրեց նաև Հանրային հեռուստատեսության համացանցային ալիքի նախնական ուրվագիծը:

4. Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը որոշեց փոփոխության ենթարկել 2019թ. ներքին աուդիտի անցկացման ժամկետները՝ Հանրային հեռուստաընկերության հաստիքացուցակի ուսումնասիրությունն առավել արդյունավետ իրականացնելու համար: